

## Սրբազան Խենդութիւն

Կարդա՛  
Ծննդոց 12. 1-5

Եթէ կրնաս հաւատալ,  
ամէն բան կարելի է  
անոր, որ կը հաւատայ:  
—Մարկոս 9. 22

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնաց. 15-16
- Յովհ. 12. 27-50

Թեան պահ մը՝ ամբողջ գիշերը արթուն մնալով: Երկար ատեն յատուկ ժողովի նիւթ դարձուձինք զայն եւ մանրամասնօրէն քննելէ ետք ամէն բան, օրացոյցին վրայ օր մը նշանակեցինք: Մեր եկեղեցիի ամենէն աղքատ անդամներն ու տարեցներու խումբը, ամենէն խանդավառն էին: Անձնապէս զարմացայ անոնց այդ խանդավառութեան: Որքա՞ն աղօթքներ ամբողջ տարուայ ընթացքին անպատասխան մնացած էին անոնց համար, եւ հիմա, մանուկի մը հաւատքով կարծես, կը վստահէին աղօթքի զօրութեան: Երբ հարցուցինք անոնց թէ քանի ժամ կ'ուզէին արթուն մնալ գիշերը աղօթքի համար: «Ամբողջ գիշերը» եղաւ անոնց պատասխանը: Անոնցմէ մէկը ըսաւ. — «մենք ժամանակ ունինք եւ հաւատք ալ ունինք, եւ մեզմէ ոմանք արդէն շատ չեն քնանար — կրնանք ամբողջ գիշերը աղօթել»:

Յաճախ հաւատքը կը յայտնուի քիչ ակնկալուած տեղէ, եւ կը պակսի, հոն՝ ուր կը խորհիս թէ պէտք է ըլլայ:

Աղօթքը հաւատքի ձայնն է:

**Ե**րբ Աստուած խօսեցաւ Աբրահամի, անմիջապէս ան հնազանդեցաւ երթալու այն երկիրը, որ Աստուած խոստացած էր իրեն: Հակառակ անգաւակ ըլլալուն, ան վստահեցաւ Աստուծոյ, որ զինք «մեծ ազգ մը պիտի ընէր» (Ծննդ. 12. 2):

Աստուած երբեմն իր գործերը կը կատարէ «սրբազան խենդերու միջոցաւ» — երազողներու՝ որոնք բռնուած կ'ըլլան տարօրինակ հաւատքով մը: Սակայն, ես տակաւին իմ որոշումներս կ'առնեմ ամէն ինչ հաշիւ ընելով:

Շիքակոյի մեր եկեղեցին օր մը մեծ տազնապի մը պատճառով, կազմակերպեց աղօթքի ծումապահու-

## Վճարել Զայն Շուտով

Կարդա՛  
Յովհ. 13. 3-15

Օրինակ մը տուի ձեզի,  
որպէսզի ինչպէս ես ըրի  
ձեզի, դուք ալ ընէք:  
—Յովհ. 13. 15

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱՒԿ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՋ

- Բ. Մնաց. 17-18
- Յովհ. 13. 1-20

վճարել» կ'ըսէ ան:

Ես կը խորհիմ, որ այս էր՝ այն ինչ որ Յիսուս ունէր իր մտքին մէջ, երբ Ան իր վերջին խօսակցութիւնը կ'ունենար իր աշակերտներուն հետ: Ան կ'ուզէր անոնց ցոյց տալ իր սիրոյ ամբողջ տարողութիւնը: Ատոր համար, վերջին ընթրիքէն առաջ Ան անձեռոց մը կապեց իր մէջքին եւ սկսաւ իր աշակերտներուն ոտքերը լուսալ: Յիսուսի այդ ըրածը զարմանք պատճառեց աշակերտներուն, որովհետեւ միայն գերիներն էին, որ իենց տէրերուն ոտքերը կը լուսային: Ծառայութեան գործ մըն էր Յիսուսի ըրածը, որ կը խորհրդանշէր իր մեծ գոհաբերութիւնը, սէրն ու խոնարհութիւնը, որ պիտի յայտնաբերուէր խաչին վրայ: Իր խնդրանքը աշակերտներէն այս էր.— «Ուստի, եթէ ես՝ Տէրս ու Վարդապետս լուացի ձեր ոտքերը, դուք ալ պարտաւոր էք լուսալու իրարու ոտքերը» (Յովհ. 13. 14):

Որքա՛ն տարբեր պիտի ըլլայ աշխարհ երբ Յիսուսի սէրը ցուցաբերենք իրարու:

Սէր Գանչնալու համար սիրտդ բաց Յիսուսի: Սէր ցոյց տալու համար, սիրտդ բաց ուրիշներու:

Վճարել Զայն Շուտով, պատկերասիրուի ժապաւէնը, 12 տարեկան պատանիներու ծրագրի մը մասին է՝ բարեփոխութիւն բերելու աշխարհի: Քաջակերուած իր ուսուցիչէն՝ ժապաւէնի հերոսներէն մէկը, փողոցէն անտուն մարդ մը կը բերէ եւ կը քնացնէ իրենց կառատան մէջ: եղածէն անտեղեակ, անոր մայրը երբ կառատան դուռը կը բանայ, կը տեսնէ մարդ մը, որ կ'աշխատէր իր ինքնաշարժին վրայ: Զէնքը անոր ուղղելով, կը հարցնէ, թէ ո՛վ է ինք: Մարդը կ'ըսէ, թէ ինք նորոգած էր այդ ինքնաշարժը իր հոն բերող երիտասարդին ազնուութեան փոխարէն - «Պարզապէս կ'ուզեմ շուտով

## Մեր Տարիներուն Տէրը

Կարդա՛  
Սաղմոս 90

Լեռներուն ծնելէ առաջ՝  
երկրին ու երկրագուն-  
դին ստեղծուելէն առաջ՝  
դարէ դար դուն  
Աստուած ես:  
—Սաղմոս 90. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԻ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնաց. 19-20
- Յովհ. 13. 21-38

Թերեւս ասոր համար է, որ 90րդ Սաղմոսը կարեւոր կը նկատուի: Այդ հատուածը կը տեղափոխէ մեր կեդրոնացումը այս աշխարհի վրայ՝ մեր կեանքին կապուած ժամանակէն, եւ զայն կը դնէ յաւիտենական Աստուծոյ վրայ: Ան կ'ըսէ. — «Լեռներուն ծնելէն առաջ՝ երկրին ու երկրագունդին ստեղծուելէն առաջ՝ դարէ դար՝ դուն Աստուած ես» (Կ. 2):

Հոգեւոր երգի մը մէկ համարը կ'ըսէ. — «Թագադրեցէք Ձայն որպէս Տէրը տարիներուն, Վեհապետը ժամանակին»: Վեհապետ մը գերիշխան մըն է, որ պէտք չունի նշանակուելու կամ ընտրութեան: Աստուած ստեղծած է ժամանակը: Ան կ'իշխէ եւ կը գերազանցէ զայն: Երբ յուսախաբուած կը զգանք օրացոյցին կամ արագ վազող ժամացոյցի սլաքներուն նայելով, հանդարտօրէն կարդանք 90-րդ սաղմոսը: Այդ ընթացքում մեզի պիտի յիշեցնէ թէ մեր օրերն ու տարիները յաւիտենական Աստուծոյ ձեռքերուն մէջն են:

---

Պետք է յաւիտենականութեան շիտակ ըմբռնումը  
ունենամք, գիտնալու ժամանակին իսկական արժէքը:

**Ե**րբ Հակիրճ Օքսֆորտ Անգլերէն  
Բառարանը 2006-ին ծանուցա-  
նեց, թէ ժամանակ բառը ամենէն  
յաճախակի գործածուած բառն է  
անգլերէն լեզուի մէջ, շատ չզար-  
մացուց մարդոց: Կ'ապրինք աշխար-  
հի մը մէջ, ուր մարդիկ յաճախ  
իրենց օրերը, ժամերն ու վայր-  
կեանները խնայողութեամբ գոր-  
ծածելու վազքին մէջ են: Անոնք  
կը փորձեն քիչ մը աւելի ժամանակ  
ունենալ օրուայ ընթացքին: Թէեւ  
բոլորս ալ նոյն չափով մեր տրա-  
մադրութեան տակ եղած բոլոր  
ժամանակը ունինք, սակայն կան  
մարդիկ, որոնք կը խորհին, թէ  
բաւարար ժամանակ չունին:

## Վախից Շրջանակը

Կարդա՛  
Ա. Յովհ. 2. 1-11

Եթէ մէկը մեղանշէ,  
Հօրը քով ունից  
բարեխօս մը՝ Յիսուս  
Քրիստոս արդարը:  
—Ա. Յովհ. 2. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնաց. 21-22
- Յովհ. 14

արդար Աստուծոյ առջեւ: Եթէ բարեխօս մը չունենայինք, ոչ կարելի պիտի ըլլար խուսափիլ եւ ոչ ալ յոյս պիտի ունենայինք՝ փրկութեան: Սակայն, Քրիստոսով՝ հաւատացեալներ ունին պաշտպանող մը, որ կը ներկայանայ Հօր Աստուծոյ առջեւ իրենց փոխարէն: Ա. Յովհ. 2. 1 համարը կ'ըսէ.— «Որդեակներս, կը գրեմ ձեզի այս բաները, որպէսզի չմեղանշէք, իսկ եթէ մէկը մեղանշէ, Հօրը քով ունինք բարեխօս մը՝ Յիսուս Քրիստոս արդարը»:

Մեր յայտնի ձախողութեանց համար, Ան կը պաշտպանէ մեզ: Մեր պաշտպանը՝ մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ «վախի շրջանակէն» անդին կը տանի եւ զայն կը վերածէ շնորհքի եւ ճշմարտութեան ընկերակցութեան մը:

Մեր մարտահրաւէրն է ապրիլ մաքրութեան եւ արժանապատուութեան կեանք մը, որ կը փառաբանէ մեր Երկնաւոր Հայրը: Այդ բոլորէն ետք, եթէ նոյնիսկ ձախողելու ըլլանք, պէտք չունինք վախնալու, թէ Աստուած պիտի լքէ մեզ, որովհետեւ ունինք Յիսուս՝ Բարեխօսը:

**Ե**րբ հանրածանօթ Արծիւներ նուագախումբը նոր երգ մը պատրաստելու ըլլայ երգահանդէսի մը համար, անոնք շրջանակի ձեւով կը նստին՝ իրենց կիթառներով, եւ առանց բարձրախօսի դժուար ձայներու փորձերը կ'ընեն: Այդ փորձերը կը կոչեն «Վախի Շրջանակ», որովհետեւ կարելի չէ սխալ ձայն մը կամ նուագ մը ծածկել ներդաշնակութեան մէջ: Այս դիւրութեամբ իրենց սխալները յայտնաբերող փորձը խումբին շատ վախազդու կը թուի ըլլալ:

Անջատ Քրիստոսէ, մենք ալ որպէս հաւատացեալներ աւելի վախազդու պիտի գտնենք ներկայանալ արդար Աստուծոյ առջեւ: Եթէ բարեխօս մը չունենայինք, ոչ կարելի պիտի ըլլար խուսափիլ եւ ոչ ալ յոյս պիտի ունենայինք՝ փրկութեան: Սակայն, Քրիստոսով՝ հաւատացեալներ ունին պաշտպանող մը, որ կը ներկայանայ Հօր Աստուծոյ առջեւ իրենց փոխարէն: Ա. Յովհ. 2. 1 համարը կ'ըսէ.— «Որդեակներս, կը գրեմ ձեզի այս բաները, որպէսզի չմեղանշէք, իսկ եթէ մէկը մեղանշէ, Հօրը քով ունինք բարեխօս մը՝ Յիսուս Քրիստոս արդարը»:

Մեր յայտնի ձախողութեանց համար, Ան կը պաշտպանէ մեզ: Մեր պաշտպանը՝ մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ «վախի շրջանակէն» անդին կը տանի եւ զայն կը վերածէ շնորհքի եւ ճշմարտութեան ընկերակցութեան մը:

Մեր մարտահրաւէրն է ապրիլ մաքրութեան եւ արժանապատուութեան կեանք մը, որ կը փառաբանէ մեր Երկնաւոր Հայրը: Այդ բոլորէն ետք, եթէ նոյնիսկ ձախողելու ըլլանք, պէտք չունինք վախնալու, թէ Աստուած պիտի լքէ մեզ, որովհետեւ ունինք Յիսուս՝ Բարեխօսը:

ԱՅ որ մեր փոխարէնը մեռաւ, հիմա կ'ապրի որպէս  
մեր բարեխօսը:

## Որդեգրում

Կարդա՛  
Կողոսացիս 3. 1-11

Ուրեմն մեռցուցէ՛ք ձեր երկրաւոր անդամները – պոռնկութիւնը, անմաքրութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը: – Կողոսացիս 3. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Մնաց. 23-24
- Յովհ. 15

Համար երախտապարտ ենք իրեն: Բայց Աստուած, որ ամէն բանի տէրն է, պէտք չունի, որ վերահատուցանենք իրեն:

Ի՞նչ կը փափաքի Աստուած ունենալ մեզմէ: Ան կ'ուզէ, որ ապրինք այնպիսի ձեւով մը, որ յարմար է մեզի որպէս իր զաւակները: Գործեր եւ խօսքեր, որոնք վայել չեն մեզի՝ որպէս Աստուծոյ զաւակները, պէտք է մէկդի դնենք (Կող. 3. 5): Անձնասիրական եւ վնասակար սովորութիւններ պէտք է փոխարինուին այնպիսի գործերով եւ արժէքներով, որոնք ցոյց կու տան մեր երախտագիտութիւնն ու սէրը Աստուծոյ հանդէպ, որպէս իրեն արժանի զաւակներ: Առաքեալը կ'ըսէ. – «Հագէ՛ք գուլթը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը» (Կ. 12):

Խնդրէ՛՛ Սուրբ Հոգիէն ինչ որ պէտք է մէկդի դնես եւ ինչ որ պէտք է ունենաս կեանքիդ մէջ, որպէսզի կարենաս աւելի ճշմարտութեամբ արտացոլացնել Աստուծոյ որդեգիր զաւակ ըլլալդ:

ՁԱՍՏՈՒԱԾ կը պատուեմք երբ գայն կը կոչեմք մեր Հայրը եւ կ'ապրիմք որպէս իր արժանի զաւակները:

Հին Հռովմի մէջ որդեգրութիւնը չյաճախ կը գործածուէր կայսրերուն կողմէ, ճշդելու յաջորդութիւնը մրցակից ժառանգորդներուն: Օգոստոս Կայսրը որդեգրուած էր իր հօրեղբօրը՝ Յուլիոս Կայսրին կողմէ: Ուրիշ յատկանշական որդեգրուածներուն մէջ կարելի է յիշել Թիպերիոս եւ Թրաճան Կայսրերը: Ասոնք բոլորն ալ փաստած են իրենց զօրաւոր իշխողներ ըլլալը, որովհետեւ անոնք ապրած են ճիշդ զաւակի մը:

Իւրաքանչիւր հաւատացեալ նոյնպէս՝ որդեգրուած զաւակ մըն է Թագաւորներու Թագաւորին կողմէ: Այս առանձնաշնորհումին

## Օրերու Օրը

Կարդա՛  
Բ. Տիմոթէոս 2. 1-4

Արդ՝ դու՛ն Եղովթիւն-  
Երու համբերէ, Յիսուս  
Քրիստոսի բարի  
զինուորի մը պէս:  
—Բ. Տիմոթէոս 2. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՁ

- Բ. Մնաց. 25-27
- Յովհ. 16

խոստացայ Աստուծոյ եւ ես ինծի, որ եթէ ապահով տուն վերադառնամ, պիտի գտնեմ հանդարտ եւ խաղաղ կտոր մը հող՝ անկիւնի մը մէջ, եւ կեանքիս մնացած ժամանակը այնտեղ խաղաղութեամբ պիտի անցընեմ: Ուրիշըր զիտեր, թէ պէտք էր տոկար մինչեւ այդ օրուան գալը:

Աստուածաշունչը կ'ըսէ թէ հաւատացեալներ պայքարի մը մէջ են, նախաձեռնուած Սատանային կողմէ՝ Աստուծոյ դէմ անոր ըմբոստութեամբ: Ասոր համար պայքարելու ենք դժուարութեանց եւ նեղութեանց դէմ, «Յիսուսի զինուորի մը պէս» (Բ. Տիմ. 2. 3): Պօղոս Առաքեալի ժամանակ Հռովմայեցի լէգէոնականներ ծանր տառապանքներու կ'ենթարկուէին Կայսրին ծառայելու իրենց պարտականութեան մէջ: Որպէս Յիսուսի հետեւորդներ, մենք ալ կանչուած ենք նեղութիւն կրելու թագաւորաց թագաւորին համար: Երկինքի մէջ նման դժուարութիւններ պիտի չունենանք: Մշտատեւ մեր Փրկչին խաղաղութիւնը պիտի վայելենք: Մինչ այդ հաւատքով պէտք է տոկալ եւ յարատեւել:

**Յաղթանակը ապահով է անոնց համար, որ կը տոկան:**

**Հ**եռատեսիլի ժապաւէն մը կը ներկայացնէր տեսարան մը Բ. Համաշխարհային պատերազմէն, երբ դաշնակից ոյժեր կը փորձէին ազատագրել Եւրոպան Նացի ոյժերու տիրապետութենէն: Գլխաւոր դերակատարը՝ զօրավար Ռիչըրտ Ուինթըրը, անկարգելով վար կը ցատկէ օդանաւէն, գնդացիներու եւ հակաօդային թնդանօթներու տեղատարափին տակ՝ ապահով:

Պատերազմէն ետք զօրավար Ուինթըրը, ակնարկելով այդ օրուայ կռիւներուն ըսած է.՝ «Այդ գիշեր ես ժամանակ յատկացուցի Աստուծոյ իմ շնորհակալութիւնս յայտնելու, որ զիս այդ օր ազատեց... ապա

## Քառեր եւ Թիւեր

Կարդա՛  
Յովհաննու 17. 20-26

Ես եւ Հայրը մէկ ենք:  
—Յովհաննու 10. 30

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԼԵԿ  
ՏԱՐՈՒՆ ԼԵԿ

- Բ. Մնաց. 28-29
- Յովհ. 17

Թէ Յիսուս «Բան» է, սակայն կը սխալիմ երբ կ'ըսեմ, թէ Ան չակնարկեց ինքն իրեն որպէս «Թիւ»: Ամենէն յուզիչ հատուածներէն մէկը Աստուածաշունչին մէջ Յիսուսի այն աղօթքն է, որ Ան աղօթեց իր ձեռքակալութենէն եւ խաչելութենէն առաջ: Մահը դիմագրաւելու ճգնաժամին, Ան ոչ միայն ինքն իրեն համար աղօթեց, այլ նաեւ իր աշակերտներուն եւ մեզի համար: Անոր ամենէն կարեւոր խնդրանքը՝ մեզի համար՝ թիւ կը պարունակէ. — «(Կ'աղօթեմ) որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն Հայր՝ իմ մէջս, ու ես Քու մէջդ, որ անոնք ալ մէկ ըլլան մեր մէջ, որպէսզի աշխարհը հաւատայ, թէ Դուն զրկեցիր Զիս» (Յովհ. 17. 21):

Որպէս Յիսուսի Խօսքով (բառով) ապրող մարդիկ, պէտք է մոռնանք, թէ «չիտակ Խօսքը» պարապ բան պիտի թուի աշխարհին, մինչեւ որ մենք մէկ ըլլանք Քրիստոսի մէջ, եւ մէկ միտքով, մէկ հոգիով եւ մէկ ձայնով, զԱստուած փառաբանենք:

Աստուած իր գաւակները կը կանչէ միաբանութեամբ:

**Ա** մուսինս «Թիւեր»ու մարդ է, իսկ ես՝ բառերու: Երբ թիւերու հանդիպիմ իմ անճարակութիւնս կը յայտնուի, եւ ես կը փորձեմ պարծենալ՝ յիշեցնելով ամուսինիս, թէ բառի մարդիկ աւելի գերադաս են, անոր համար որ, Յիսուս ինքզինք Բանը (բառը) կոչեց եւ ոչ թէ թիւը: Փոխանակ ինքզինք պաշտպանելու, ամուսինս կը ժպտի եւ կ'երթայ իր գործին, որ աւելի կարեւոր է, քան իմ անիմաստ վիճաբանութիւնս:

Այնքան ատեն որ ամուսինս ինքզինք պիտի չպաշտպանէ, ես պարտադրուած կը զգամ այդպէս ընելու: Թէեւ ես շիտակ եմ պնդելով, թէ Յիսուս «Բան» է, սակայն կը սխալիմ երբ կ'ըսեմ, թէ Ան չակնարկեց ինքն իրեն որպէս «Թիւ»: Ամենէն յուզիչ հատուածներէն մէկը Աստուածաշունչին մէջ Յիսուսի այն աղօթքն է, որ Ան աղօթեց իր ձեռքակալութենէն եւ խաչելութենէն առաջ: Մահը դիմագրաւելու ճգնաժամին, Ան ոչ միայն ինքն իրեն համար աղօթեց, այլ նաեւ իր աշակերտներուն եւ մեզի համար: Անոր ամենէն կարեւոր խնդրանքը՝ մեզի համար՝ թիւ կը պարունակէ. — «(Կ'աղօթեմ) որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն Հայր՝ իմ մէջս, ու ես Քու մէջդ, որ անոնք ալ մէկ ըլլան մեր մէջ, որպէսզի աշխարհը հաւատայ, թէ Դուն զրկեցիր Զիս» (Յովհ. 17. 21):

Որպէս Յիսուսի Խօսքով (բառով) ապրող մարդիկ, պէտք է մոռնանք, թէ «չիտակ Խօսքը» պարապ բան պիտի թուի աշխարհին, մինչեւ որ մենք մէկ ըլլանք Քրիստոսի մէջ, եւ մէկ միտքով, մէկ հոգիով եւ մէկ ձայնով, զԱստուած փառաբանենք:

## Կեանք Մը՝ Յիշատակուած

Կարդա՛  
Սաղմոս 139. 1-16

Որպէսզի մենք ալ  
կարենանք մխիթարել  
անոնք, որ որեւէ տառա-  
պանքի մէջ են, այն  
մխիթարութեամբ, որով  
մենք կը մխիթարուիք  
Աստուծմէ:

—Բ. Կորնթացիս 1. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Բ. Մնաց. 30-31

■ Յովհ. 18. 1-18

էր եւ ձգած անհասկնալի՝ անհամար հարցումներու տակ:

Քանի որ ես ալ մի քանի տարիներ առաջ նման փորձա-  
ռուութեամբ՝ կորսնցուցած էի իմ պարմանուհի աղջիկս, մի  
գուցէ կրնայի կարգ մը խրատներ տալ խոր ցաւի  
մատնուած Քրիստինի ծնողքին եւ եկեղեցիի ժողովուրդին:

Առաջին ճշմարտութիւնը որ շեշտեցի, այն էր, թէ մենք  
պէտք է ճանչնանք Աստուծոյ գերիշխանութիւնը: Սաղմոս  
139. 16 համարը կը յիշեցնէ մեզի, թէ Քրիստինին կեանքը  
այնքան եղաւ, որքան Աստուած որոշած էր ըլլալու:  
Երկրորդ, եկեղեցիի ժողովուրդէն խնդրեցի, որ երբեք  
չմոռնան անոր ծնողքը՝ ըլլայ երկու ամիսներ կամ հինգ  
տարիներ ետք, որովհետեւ անոնք պիտի չկարենան  
հաշտուիլ Քրիստինի կորուստին հետ: Անոնք միշտ պէտք  
պիտի ունենան հաւատացեալներու՝ իրենց մօտ ըլլալուն:  
Նման պարագաներու տակ, պէտք չէ մոռնալ, թէ Աստուած  
է կացութեան տէրը եւ Ան կ'ուզէ որ մխիթարութիւն  
ըլլանք ուրիշներու:

**Հ**այրիկ, օգնէ՛ ինձի: Աստուք էին  
այն վերջին բառերը որ ծնողք  
մը լսեցին իրենց 14 տարեկան մա-  
համերձ զաւկին բերնէն: Քրիստին  
միայն երկուր օրեր առաջ ըսած էր,  
թէ անհանգիստ կը զգար: Վարակիչ  
հիւանդութիւն մը պատած էր անոր  
մարմինը անակնկալօրէն:

Քրիստինին մահէն առաջ ես  
հրաւիրուած էի խօսելու իրենց եկե-  
ղեցիի ընտանիքներուն: Եւ այդ օրը  
գուգադիպեցաւ Քրիստինին յուղար-  
կաւորութենէն միայն մէկ օր ետք:

Քրիստին վառվռուս պարմա-  
նուհի մըն էր, որ կը սիրէր Յիսուսը  
եւ կ'ապրէր Անոր համար: Անոր  
անակնկալ մահը բոլորս ալ ցնցած

Ամէն յուսահատութեան անպատիւ մէջ, Աստուած  
ունի մխիթարութեան ովասիս մը:

## Վտանգ

Կարդա՛  
Առակաց 6. 16-19

Ուրեմն խոնարհեցէ՛ք  
Աստուծոյ հօգօր ձեռքին  
տակ, որպէսզի ժամա-  
նակին բարձրացնէ ձեզ:  
—Ա. Պետրոս 5. 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնաց. 32-33
- Յովհ. 18. 19-40

զիրենք հպարտ ցոյց կու տան: Անոնց դէմքի արտայայտուածութիւնը այնպէս կը թուի, թէ կարծես կը քաջալերէ մարդոց, որ արգելքներ ստեղծեն իրենց ճամբուն վրայ կամ մնան լուռ առարկողներ:

Այսօրուայ Աստուածաշունչի ընթերցուածը կ'ըսէ, թէ Աստուած կ'ատէ եօթը բաներ եւ անոնց առաջինը հպարտութիւնն է: Երբ մէկը ինքզինք կը գերազնահատէ ուրիշները թերագնահատելով, ան անպատճառ զայն կ'արտայայտէ հպարտ նայուածքով: Փքացած ինքնահաւանութեամբ, ան կրնայ նաեւ ստեղծել չարիք եւ սերմանել գժտութիւն:

Պետրոս Առաքեալ կը յիշեցնէ մեզի չվստահիլ մենք մեզի, այլ՝ Աստուծոյ, որ մեզ «պիտի բարձրացնէ ժամանակին» (Ա. Պետ. 5. 6): Երբ մենք մեզ Աստուծոյ տրամադրութեան տակ դնենք, խուսափած կ'ըլլանք այն վտանգէն, որ հպարտութիւնը կը բերէ մեր նկարագրին եւ մենք կ'ըլլանք Աստուծոյ խոնարհ ծառաները:

**Ե**րբ մեր զաւակները փոքր էին, մեր նախապրած խաղերէն մէկը կը կոչուէր Վտանգ: Խաղին նպատակը աշխարհը գրաւել էր: Իւրաքանչիւր խաղացող կը զինէր իր զինուորները՝ գրաւելու երկիրներ եւ ցամաքամասեր: Ինծի համար հաճելի թուող մասը այն էր, որ յաճախ սկիզբը յառաջդիմող խաղացողը, քիչ անգամ կը շահէր խաղը: Պատճառը յայտնի էր: Երբ միւս խաղացողները զգային անոր յառաջացող հպարտութիւնը, իրարու կը միանային պայքարելու իր դէմ:

Ըլլայ գիտակցաբար կամ անգիտակցաբար, դիւրին է չախորժիլ զօրաւոր մարդերէ, որոնք իրենք

### Յաւիտեանական Գարնան Երկիրը

Կարդա՛  
ժողովողի 12. 1-7

Երիտասարդ էի ու ծե-  
րացայ, բայց արդարը  
լքուած չտեսայ:  
—Սաղմոս 37. 25

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Վ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ

- Բ. Մնաց. 34-36
- Յովհ. 19. 1-22

է: Ուրեմն պէտք է համակերպինք մեզի արժամեայ տկա-  
րացնող պատճառներուն եւ կարօտը զգանք մեր երկնային  
տան: Եթէ մնալու ըլլանք միշտ երիտասարդ, զօրաւոր եւ  
գեղեցիկ, երբեք պիտի չուզենք լքել այս երկիրը»:

Երբ երիտասարդ ենք, ուրախութեամբ զբաղած կ'ըլլանք  
մեր աւօրեայ գործերով եւ մարդոց հետ ունեցած յարա-  
բերութիւններով եւ բնաւ չենք կարօտնար մեր երկնային  
տունը: Սակայն, ժամանակի ընթացքին մենք մեզ կը  
գտնենք առանց ընտանիքի եւ բարեկամներու, մեր  
տեսողութիւնը կը տկարանայ, դժուար կը լսենք, չենք  
վայելեր մեր կերածը եւ կը սկսինք տառապիլ անքնութենէ:

Նման պարագային, ես ինծի սա խրատը կու տամ.—  
Երախտապարտ եղի՛ր, ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ  
Տիմոթէոսի «Աստուած... կու տայ մեզի ճոխութեամբ, ամէն  
բան վայելելու համար» (Ա. Տիմ. 6. 17), մեր կեանքի ամրան  
եւ աշնան: Պէտք է ուրախանալ նաեւ երբ կեանքի ձմեռը  
մօտենայ, որ պիտի տանի մեզ յաւիտեանական գարնան:

**Գ** ոլոմպիայի Աստուածաշունչի  
Գոլէճի նախկին նախագահը  
առիթով մը մատնանչեց, թէ  
Աստուած իմաստուն նպատակ մը  
ունի, երբ թոյլ կու տայ, որ ծերա-  
նանք եւ տկարանանք: Ան ըսաւ.—  
«Կը խորհիմ, որ Աստուած ծրագրած  
է, որ երիտասարդներուն զօրութիւնն  
ու գեղեցկութիւնը ըլլայ մարմնա-  
կան: Բայց տարեց մարդոց զօրու-  
թիւնն ու գեղեցկութիւնը հոգեկան  
է: Մենք ժամանակի ընթացքին  
հետզհետէ կը կորսնցնենք մեր զօրու-  
թիւնն ու գեղեցկութիւնը, որոնք  
ժամանակաւոր են որպէսզի կեդրո-  
նանանք այն զօրութեան եւ գեղեց-  
կութեան վրայ, որ յաւիտեանական

Երկինքի խոստումը մեր յաւիտեանական յոյսն է:

## Կրօնքի Սիրահարներ

Կարդա՛  
Մատթեոս 10. 16-22

Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով թող ըլլայ, աղով համեմուած, որ գիտնաք, թէ ինչպէս պէտք է պատասխանէք իրարու:

—Կողոս. 4. 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Եկրաս 1-2

■ Յովհ. 19. 23-42

ստեղծուի եւ վիճաբանութեան նիւթը, որ գիրենք իրարմէ կը զատէր, բոլորովին կը փոխուի:

Ճաշկերոյթի աւարտին երբ անոնք դէպի դուռ կը քալեն, մարդը վերջին հարուած մըն ալ կ'արձակէ բարեկամիս: Բարեկամս ձեռքը մարդուն ուսին դնելով ժպտով մը կ'ըսէ:— «Բարեկամ, ամբողջ գիշերը փորձեցիր հետս խօսիլ կրօնքի մասին, ի՞նչ է, դուն կրօնքի սիրահար մըն ես»:

Մարդուն թշնամական տրամադրութիւնը կարծես յանկարծ կ'անհետանայ խնթուքի մը մէջ եւ կը սկսի ինքն իրեն մտածել, թէ ինք իսկապէս կրօնքի սիրահար մըն էր: Բոլորս ալ անյազ կրօնասէրներ ենք՝ անողոքաբար հալածուած Աստուծոյ սէրէն, թէեւ երբեմն կը փորձենք Հեռու մնալ իրմէ: Բարեկամիս ազնուութիւնը կ'արթնցնէ մարդը եւ կը բանայ անոր սիրտը ընդունելու Աւետարանը:

Պէտք է «խորագէտ ըլլանք օձերու պէս» (Մատթ. 10. 16) երբ գործ ունինք ոչ հաւատացեալներու հետ, խօսելով անոնց հետ «չնորհքով եւ աղով համեմուած» (Կող. 4. 6):

**Երկրի աղի պէս հաւատացեալներ կրճամ ուրիշներուն ծարաւը արթնցնել կեանքի ջուրիմ հանդէպ:**

**Բ**արեկամս օր մը կը հրաւիրուի ճաշկերոյթի մը եւ իրեն կը վիճակուի նստիլ անհաւատ մարդու մը քով, որ հաճոյք կ'առնէր հաւատացեալներուն հետ վիճելով եւ զանոնք ծաղրելով:

Ամբողջ ճաշկերոյթի ընթացքին, մարդը անգլթօրէն կը նեղէ բարեկամս, շեշտելով քրիստոնէութեան բերած չարիքները դարերու ընթացքին: Ամէն նախատինքի բարեկամս կը պատասխանէ հանդարտօրէն «Այդ ըսածդ հետաքրքրական տեսակէտ մըն է» ըսելով: Վերջաւորութեան բարեկամս հարցում մը կը հարցնէ մարդուն, որուն պատճառաւ անկեղծ հետաքրքրութիւն կը

## Արդար Առեւտուր Մը

Կարդա՛  
Սաղմոս 119. 161-168

Ես կ'որախանամ քու  
խօսքերովդ, շատ աւար  
գտնողի պէս:  
—Սաղմոս 119. 162

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եկրաս 3-5
- Յովհ. 20

Թիւնը շատ մեծ էր - 15 տարիներ իրենց հանգիստ ապրելակերպը ձգել, սովորական ճաշին փոխարէն բրինձ ուտել եւ այդպէս շատ ցած մակարդակի կեանք մը ապրիլ 15 տարիներ շարունակ: Սակայն, անոնք կ'ըսեն, թէ իրենց ըրածը «արդար առեւտուր մըն էր», որովհետեւ հիմա Ափրիկէի Ֆուլանի կոչուած ցեղախումբը ունի Աստուծոյ Խօսքը լեզուով մը, որ կրնան կարդալ եւ հասկնալ:

Սաղմոսերգուն ալ կ'ուրախանայ Աստուծոյ Խօսքով: Ան ակնածանքով կը մօտենայ անոր, կ'ուրախանայ անոր վրայ, կը սիրէ զայն եւ կը հնազանդի անոր (Սաղմ. 119. 161-168): Ան խաղաղութիւն եւ մեծ յոյս կը գտնէ Խօսքին մէջ:

Ափրիկէի այդ ցեղախումբը հիմա մեծ գանձ մը գտնողի պէս կարող է կարդալ եւ օրհնուիլ Աստուծոյ Խօսքով (հ. 162): Արդեօք դուն ալ համաձայն ես այդ զոյգին, թէ որեւէ ճիգ եւ զոհաբերութիւն Աստուածաշունչը ուրիշներուն մատչելի դարձնելու, «արդար առեւտուր մըն է»:

Աստուծոյ հանդէպ ունեցած մեր սիրոյ չափերէն մէկը Իր Խօսքը ուրիշներուն հետ բաժնեկցելու մեր յօժարակամութիւնն է:

**Զ**ոյգ մը, իրենց կեանքի 15 տարիները կը տրամադրեն թարգմանելու Նոր Կտակարանը Ափրիկեան ցեղախումբի մը բարբառին: Առաջին փորձէն ետք, կինը կ'այցելէ մօտակայ գիւղերը եւ կը կարդայ զայն տեղացիներուն: Խրճիթներու մէջ ան կը նստի եւ մտիկ կ'ընէ խումբ մը մարդոց եւ կիներու, որոնք կը խորհրդակցին իրենց լսածէն հասկցածին մասին: Այդ հանդիպումները կ'օգնեն իրեն վատա՛ ըլլալու, թէ իր գործածած բառերը թարգմանութեան ընթացքին ճշգրիտ էին եւ յստակ:

Կարգ մը մարդիկ կրնան մտածել, թէ այդ զոյգին զոհաբերու-

## Ծամբունց Մէջ Ըլլալ

Կարդա՛  
Յովհաննու 14. 1-6

Յիսուս ըսաւ... «Ես եմ  
ճամբան, ճշմարտու-  
թիւնն ու կեանքը, ոչ  
մէկը կու գայ հօրը թով՝  
բայց միայն ինձմով»:  
—Յովհ. 14. 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եպրատ 6-8
- Յովհ. 21

Յիսուս կը բանայ նոր ճամբայ մը.— «Սիրեցէ՛ք ձեր  
թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները» (Մատթ. 5.  
44): Շատ դիւրին է դատել եւ քննադատել ուրիշները, բայց  
նոր ճամբայ բացող Յիսուս կ'ըսէ, լաւ է որ մեր աչքին  
գերանը նախ դուրս հանենք (7. 3-4): Առաւել Ան կը  
բանայ մեզի ճամբայ մը, որ ապրինք առատաձեռ-  
նութեամբ եւ ոչ թէ ազահութեամբ (Ղուկ. 12. 13-34):

Երբ Յիսուս կ'ըսէ «Ես եմ ճամբան», Ան մեզի կոչ  
կ'ընէ մէկդի դնելու մեր հին ճամբաները, որ կործանումի  
կը տանին եւ հետեւիլ իրեն նոր ապրելաձեւ մը որդեգրե-  
լով: Իր իսկական իմաստով «հետեւիլ» բառը (Մարկ. 8.  
34) կը նշանակէ «ճամբուն մէջ ըլլալ» իրեն հետ:

Մենք ազատութիւնը ունինք ընտրելու մեր ճամբան:  
Թերեւս պիտի ուզենք քալել մեզի ծանօթ ճամբէն, որ ի  
վերջոյ կը տանի կործանումի: Միւս կողմէ, Յիսուս կոչ  
կ'ընէ հետեւիլ իրեն եւ քալել իր ճամբէն, որ իսկութեան  
մէջ ինք թէ՛ ճամբան է եւ թէ՛ առաջնորդը միեւնոյն ատեն:

---

Մե՞նք պէտք չունինք քամբան տեսնելու, եթէ կը  
հետեւինք Մէկու մը որ Ի՞նչ է քամբան:

Հին Հռովմայեցիները նշանա-  
լոր էին իրենց ճամբաներով,  
որոնք կը խաչաձեւէին իրենց կայս-  
րութիւնը լայն եւ բանուկ մայրու-  
ղիներով: Այս իրողութենէն հետե-  
ցընելով, Յիսուսի ունկնդիրները  
կրցան պատկերացնել Յիսուսի  
Խօսքը, երբ ըսաւ.— «Ես եմ ճամբան»  
(Յովհ. 14. 6): Մինչ այս համարը կ'ակ-  
նարկէ, թէ Յիսուս է երկիրնքի ճամ-  
բան, սակայն, կայ աւելին: Կտրելով  
այս աշխարհի մանր թուփերն ու  
խիստ անտառը, Յիսուս կը բանայ  
մեզի ապրելու նոր ճամբայ մը:  
Մինչ շատեր կը հետեւին աշխարհի  
ճամբուն՝ սիրելով իրենց բարեկամ-  
ները եւ ատելով իրենց թշնամիները,

## Խորհրդածէ Այս Բաներուն Վրայ

Կարդա՛  
Սաղմոս 119. 89-105

Պիտի խորհրդածեմ քու  
փառքիդ պատուական  
վայելչութեան եւ  
սքանչելի գործերուդ  
վրայ:  
—Սաղմոս 145. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Եկրաս 9-10  
■ Գործք 1

Ան կը կեդրոնանայ Տէրոջ ըրած գործերուն եւ խօսքերուն վրայ, որուն նպատակն է մեր միտքերը նորոգել (Հռովմ. 12. 2), որպէսզի մենք ալ սկսինք մտածել եւ գործել աւելի Քրիստոսի նմանութեամբ: Անոր նպատակն է արտացոլացնել այն՝ ինչ որ Աստուած ըսած եւ ըրած է (Սաղմ. 77. 12, 119. 15-16, 97) եւ ինչ բանի նման է Ան (48. 9-14): Սաղմ. 19. 14 Համարին մէջ Դաւիթ կ'ըսէ.— «Բերնիս խօսքերը եւ սրտիս խորհուրդները քու առջեւ ընդունելի ըլլան, ո՛վ Տէր»: Ուրիշ սաղմոսներ կ'արտայայտեն Աստուծոյ սէրը (48. 9), Անոր գործերը (77. 12), Անոր օրէնքը (119. 97) եւ Անոր վկայութիւնները (119. 99):

Պէտք է լեցնել մեր միտքը Աստուծոյ Խօսքով եւ կեդրոնանալ Տէրոջ պատուիրաններուն, խոստումներուն եւ բարութեան վրայ: Եւ պէտք է յիշել, թէ Այն՝ ինչ որ ճշմարիտ է, ազնիւ, արդար, մաքուր, սիրելի եւ բարի Համբաւով, «Ի՛նչ որ առաքինութեամբ եւ ի՛նչ որ գովելի է», ատոնց մասին խորհրդածենք (Փիլիպ. 4. 8):

Քրիստոսի աւելի նմանելու համար, պէտք է  
խորհրդածել Իր ո՛վ ըլլալուն վրայ:

**Կ**արգ մը Հաւատացեալներ  
Կքիչ մը կասկածամիտ կը թուին  
ըլլալ, երբ իրենց խօսուի խորհրդածութեան մասին: Անոնք չեն նկատեր  
Հսկայ տարբերութիւնը աստուածաչնչական խորհրդածութեան եւ  
այլ խորհրդաւոր խորհրդածութեանց  
միջեւ: Խորհրդաւոր խորհրդածութեան պարագային, ըստ բացատրութեան մը, «Տրամաբանող միտքը կը տեղափոխուի չէզոք վիճակի մէջ, որպէսզի Հոգին իր տեղը առնէ»: Այնտեղ կեդրոնացումը ներհայեաց կ'ըլլայ, եւ նպատակը «Աստուծոյ Հետ մէկ ըլլալն է»:

Իսկ աստուածաչնչական խորհրդածութիւնը ճիշդ Հակառակն է:

## Շարունակուող Քաջալերութիւն

Կարդա՛  
Կողոսացիս 3. 14-25

Հայրե՛ր, մի՛ գրգռէք  
ձեր զաւակները,  
որպէսզի չվհատին:  
—Կողոսացիս 3. 21

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Նէեմեայ 1-3
- Գործք 2. 1-21

Հայրերուն, որ դրական դիրք ունենան իրենց զաւակներուն դաստիարակութեան եւ աճումին մէջ եւ ոչ թէ բարկութեամբ վախցնեն եւ վհատեցնեն զանոնք: Անոր համար Առաքեալը կը պատուիրէ ըսելով.— «Եւ դո՛ւք՝ Հայրեր, մի՛ բարկացնէք ձեր զաւակները, հապա մեծցուցէ՛ք զանոնք Տէրոջ կրթութեամբ եւ խրատով» (Եփես. 6. 4): «Հայրեր, մի՛ գրգռէք ձեր զաւակները, որպէսզի չվհատին» (Կողոս. 3. 21): Այս երկու համարներուն մէջ կը շեշտուի ընտանիքի անդամներուն զիրար սիրելն ու յարգելը: Հօր մը պաշտօնը կը փոխուի երբ զաւակները կը մեծնան, սակայն վերջ չի գտներ: Գնահատելն ու քաջալերելը միշտ ողջունելիի են եւ օգտակար զաւակներուն համար, ըլլան անոնք 4 տարեկան կամ 40 տարեկան: Աղօթքը միշտ զօրաւոր է եւ օրհնաբեր զաւակին համար: Եւ երբեք կանուխ չէ կտրուած յարաբերութիւն մը նորոգելը մեր զաւակներուն հետ:

Հայրեր, հիմա լաւ ժամանակն է ձեր զաւակներուն ըսել, թէ որքա՛ն շատ կը սիրէք եւ կը գնահատէք զիրենք:

---

Ամենէն մեծ նուէրը որ հայր մը կրնայ տալ իր  
զաւակներուն՝ ինքզինքը տալն է:

**Շ**ատ մը երկիրներու մէջ կը տօնուի Հայրերու Օրը: Թէեւ տօնակատարութիւնները իրենց սկզբունքով, աւանդութեամբ եւ գործունէութիւններով երկրէ երկիր կը տարբերին, բայց հասարակաց իրողութիւնը Հայրերը յարգելն է իրենց ծնողական դերին համար:

Այս տարի Հայրերու Օրուան առիթով ուզեցի տարբեր բան մը ընել: Փոխանակ սպասելու, որ զաւակներս հեռաձայն մը ընեն կամ քարտ մը դրկեն, ես իրենց եւ իրենց մօր ղրկեցի գնահատանքի խօսքեր: Ամէն պարագայի, առանց իրենց ես պիտի չկարենայի Հայր մը ըլլալ:

Պօղոս Առաքեալ կ'ուսուցանէ

## Իմ Երկու Սէնթս

Կարդա՛  
Գործք 2. 40-47

Մի՛ մերժեր բարիք ընել կարօտ եղողից, երբ ձեռքիդ մէջ զայն ընելու գորութիւն կայ:  
—Առակ. 3. 27

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Նէեմեայ 4-6
- Գործք 2. 22-47

սէնթի, գործիքները վերադարձուցած ըլլալուս համար: Նման փորձառութիւն մը անկասկած ջղայնացուցիչ է: Պարզ հաղորդակցութեան մը պակասը պարզ հարց մը բարդացուցած էր:

Դժբախտաբար մեր եկեղեցիներուն մէջ ալ կարգ մը մարդիկ նման ոչ-անձնական պատասխանի կը հանդիպին իրենց կարիքներուն համար, ըլլան անոնք ամուսնական խորհուրդի, մանուկի հոգածութեան կամ նեղութիւն պատճառող իրենց պատանի զակին համար: Եւ հոգացող շրջանակ մը չգտնելով կը լքեն եկեղեցին ու կը հեռանան:

Առաջին դարու եկեղեցին թէեւ կատարեալ չէր, սակայն հաւատարմաբար կ'օգնէր կարօտեալին: Երուսաղէմի եկեղեցին «իրենց...ինչքերը...կը բաժնէին բոլորին, որոնք որ պէտք ըլլար» (Գործք 2. 45): Լաւ հաղորդակցութիւնը լաւագոյն միջոցն է հասկնալու ուրիշներուն կարիքները: Երբ իսկապէս հասկնանք մարդոց կարիքները, այլեւս դիւրին կ'ըլլայ մեզի օգնել արժանաւորին:

**Վ**երջերս փոխեցինք մեր համացանցի ընկերութիւնը: Նախկին ընկերութիւնը խոստացած էր ղրկել թղթատարական ծախքերը վճարուած տուփ մը, որպէսզի իրենց գործիքները վերադարձնէինք: Բաւական սպասեցինք, սակայն ոչ մէկ տուփ եկաւ: Ստիպուեցայ հեռաձայնել: Տուփը տակաւին չեկած ստացանք հաշուեցոյց մը վճարելու մեր մօտ մնացած գործիքներուն գինը:

Հարցը լուծելու համար որոշեցի գործիքները վերադարձնել իմ ծախսերովս: Մի քանի անգամ փորձեցի կապ պահել իրենց հետ բայց ոչ մէկ պատասխան ստացայ: Մի քանի օր ետք չէք մը ստացայ երկու

## Պարզ Սէնթեր

Կարդա՛  
Մարկոս 12. 41-44

(Յիսուս ըսաւ), «Այս աղքատ այրին՝ գանձանակը դրամ ձգող-ներուն բոլորէն աւելի ձգեց»:  
—Մարկոս 12. 43

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Նէեմեայ 7-9
- Գործք 3

սկսին գալ Միացեալ Նահանգներու ամէն կողմէ, ինչպէս նաեւ Մէքսիքոյէ, Գանատայէ եւ Պահամասէն: Հաւաքուած սէնթերով Մայք կը հաւաքէ 28,000 տոլարի գումար մը:

Պարզ սէնթ մը շատ բան չարժեր մինչեւ որ անոր վրայ աւելնան ուրիշ մեծ թիւով սէնթեր: Մարկոսի Աւետարանին 12-րդ գլուխին մէջ յիշուած կիրնը մէկ սէնթէն պակաս բան մը՝ երկու լումայ կը դնէ գանձանակին մէջ, որ իր ամբողջ ունեցածն էր (Կ. 44): Սակայն Յիսուս մեծապէս գնահատեց այդ կնոջ ըրածը:

Այրի կնոջ գոհաբերութիւնը մեծ օրինակ մը եւ քաջալերութիւն մըն էր աշակերտներուն համար, եւ ինչո՞ւ չէ, մեզի համար ալ: Ան տուաւ իր ամբողջ ունեցածը: Արդեօք մենք այդքան առատաձեռն եղա՞ծ ենք: Յիսուս այդ անանուն այրի կնոջ ըրածը օգտագործելով կ'ուզէ մեզի ուսուցանել, թէ ճիշդ ի՞նչ կը նշանակէ տալ: Այրի կնոջ տուածը մէկ սէնթէն պակաս՝ թէեւ անարժէք, բայց անկեղծ սիրոյ նուէր մըն էր տրուած Աստուծոյ:

---

Աստուած սրտին կը նայի եւ ոչ ձեռքին, տուողին՝ եւ ոչ նուէրին:

**Մ**այք, Իլինոյ Համալսարանի Մառաջին տարուայ ուսանող մը, ինքնուրոյն միջոց մը կը գտնէ իր ուսման ծախսերը հոգալու: Ան կը համոզէ Նահանգի ամենէն նշանաւոր թերթին՝ Շիքալօ Թրիպիուոն-ի խմբագիրը, որ «Մէկ Սէնթ Ղրկեցէք Մայքին» խնդրագիր-ծանուցումը դնէ թերթին մէջ: «Ճիշդ մէկ սէնթ» կ'ըսէ Մայք: «Մէկ սէնթը ոչինչ կը նշանակէ ոեւէ մէկուն համար: Եթէ մէկը իր սենեակին մէջ շուրջը նայի, անպատճառ սէնթեր կը գտնէ անկիւն մը նետուած: Այդ է ուզածս: Մէկ սէնթ իւրաքանչիւր ընթերցողէ»:

Ամիսը չաւարտած, 2.3 միլիոն սէնթ կը հաւաքուի: Նուէրները կը

## Կարեկցող Համարձակութիւն

Կարդա՛  
Գործք 4. 5-13

Իսկ անոնք, նայելով  
Պետրոսի ու Յովհանն-  
նէսի... զարմացան եւ  
գիտցանք, թէ անոնք  
Յիսուսի ֆետ էին:  
—Գործք 4. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ  
ՍԱՐԴԱՆՆԵՐ

- Նէնմեայ 10-11
- Գործք 4. 1-22

**Գործք Առաքելոցի 4-րդ գլուխին մէջ երբ եկեղեցին տակաւին նոր էր, Պետրոս եւ Յովհաննէս ալ քաջաբար Յիսուսը կը ներկայացնէին իրենց սերունդին: Եւ այդ օրուայ առաջնորդներուն անդրադարձը եղաւ զարմանք.— «Իսկ անոնք, նայելով Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութեան, եւ ըմբռնելով թէ անուս ու տգէտ մարդիկ են՝ զարմացան, եւ գիտցան թէ անոնք Յիսուսի հետ էին» (4. 13): Անոնց այդ քաջութիւնը արդիւնքը չէր անոնց մարզուած աւետարանիչներ ըլլալուն, այլ անոնք Յիսուսի հետ ըլլալով ներշնչուած էին Անոր կեանքէն եւ ուսուցումներէն: Եւ այդ բոլորին որպէս արդիւնք, անոնք կարեկից դարձած էին Յիսուսի մարդոց հանդէպ ունեցած մտահոգութեան — մարդոց յաւիտենական ճակատագրին:**

Այդ նոյն կարեկցող քաջութիւնը կար Լոնտոնի այդ արուարձանի փողոցին մէջ Յիսուսը մարդոց ներկայացնող երիտասարդին դէմքին վրայ: Մարդիկ նման բան մը կը տեսնե՞ն մեր դէմքին վրայ որպէս հաւատացեալներ:

**Հաւատացեալը դեսպան մըն է, որ կը խօսի քագաւոր-  
ներու քագաւորիմ մասին:**

**Ե**րիտասարդ մը Անգլիոյ Լոնտոն քաղաքի արուարձաններէն մէկուն փողոցին մէջ կեցած կը քարոզէր անցնող մարդոց: Շատեր զինք անտեսելով կ'անցնէին, ոմանք կը ծաղրէին, եւ ուրիշներ ալ կեցած մտիկ կ'ընէին: Սակայն, հակառակ կարգ մը մարդոց աննկատ վերաբերմունքին, ան կը շարունակէր քարոզել: Զօրաւոր ձայնով եւ վճռակամութեամբ, ան կը թափէր իր սիրտը ոչ բարկացած մարգարէի մը պէս, այլ խոր մտահոգութիւն եւ կարեկցութիւն ցուցաբերելով եւ ոչ թէ դատապարտելով: Քարոզիչը քաջաբար կ'ուզէր անցորդներուն հետ բաժնեկցիլ Յիսուսի սէրն ու շնորհքը:

**Փորձութեան Են-  
թարկուած Եղբայրներ**

Կարդա՛  
Ծննդոց 39. 1-12

Ուրեմն ես ինչպէ՞ս այս  
մեծ չարիքը ընեմ ու  
Աստուծոյ դէմ  
մեղանշեմ:  
—ԾՆՆԴՈՅ 39. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Նէեմեայ 12-13
- Գործք 4. 23-37

**Յուդա, որ ինկալ յուսահատութեան մատնուած եւ անտեսուած իր հարսին՝ Թամարի դաւադրութեան մէջ (Ծննդ. 38): Եւ Յովսէփ, որ խուսափեցաւ Պետափրէսի կնոջ ծուղակը իյնալէն (Ծննդոց 39): Առաջինը տգեղ անպատասխանատուութեան եւ խաբէութեան պատմութիւն մըն է, իսկ երկրորդը՝ գեղեցիկ հաւատարմութեան օրինակ մը: Յուդայի եւ Յովսէփի պատմութիւնները, իրար ետեւ՝ յաջորդաբար, Յակոբի պատմութեան ճիշդ մէջտեղը (37. 2), ցոյց կու տան, թէ փորձութիւնը ինքնին չէ բուն հարցը: Ամէն մարդ կը պատահի որ փորձութիւն դիմադրաւէ: Նոյնիսկ Յիսուս փորձութեան մատնուեցաւ (Մատթ. 4. 1-11): Սակայն՝ բուն հարցը այն է, թէ ինչպէ՞ս կը դիմադրաւենք փորձութիւնը: Արդեօք կը ցուցաբերե՞նք Աստուծոյ վրայ ունեցած մեր հաւատքը, որ կրնայ պաշտպանել մեզ մեղքին տեղի տալէ: Փորձութիւնն կը դիմադրաւես: Նկատէ զայն որպէս առիթ, զԱստուած եւ իր Խօսքը իրականութիւն դարձնելու կեանքիդ մէջ: Յետոյ փախիր հեռու...:**

**Մե՞նք փորձութեան մէջ կ'իյնանք երբ անոր դէմ չենք  
կանգնիր:**

**Ե**րկու եղբայրներ՝ երկուքն ալ տունէն հեռու, կը դիմադրաւեն նոյնանման փորձութիւններ: Մէկը ընտանիքէն հեռու աշխատանքի մը մէջ ըլլալով, կ'իյնայ երիտասարդ կնոջ մը ծուղակին մէջ: Անոր գործած մեղքը զինք կը մատնէ դժուարին կացութեան մը եւ ընտանեկան վէճերու: Միւս եղբայրը, որ իր սիրելիներէն բաժնուած էր ընտանեկան անվերջ անալի վէճերու պատճառով, խուսափեցաւ տարեց կնոջ մը ծուղակը իյնալէն: Անոր հաւատարմութիւնը իր ընտանիքը ազատելու եւ իր յարաբերութիւնը նորոգելու առաջնորդած էր:

Ո՞վ էին այդ երկու եղբայրները:

## Երջանիկ Վերամիացում Մը

Կարդա՛  
Յայտնութիւն 21. 1-5

Ահա Աստուծոյ խորանը՝  
մարդոց մէջ: Ինք պիտի  
բնակի հոն, եւ անոնք  
պիտի ըլլան Իր  
ժողովուրդը:  
—Յայտնութիւն 21. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Եսթեր 1-2
- Գործք 5. 1-21

ուր Աստուծոյ ժողովուրդը իր փառքի իրականութեան մէջ միասին պիտի բնակին յաւիտենապէս:

Առաքեալը կը խօսի այն օրհնութիւններուն մասին, որ Աստուծոյ ժողովուրդը պիտի վայելեն երբ Ան բնակի իրենց մէջ: Այնտեղ ընդմիջտ ջնջուած պիտի ըլլայ մեղքին մեզ տկարացնող հետեւանքները: Այդ տեսիլքին մէջ Առաքեալը կ'ըսէ, թէ այլեւս ոչ մահ, ոչ սուգ, ոչ ցաւ եւ ոչ բաժանում պիտի ըլլայ: Այդ բոլորը անհետացած պիտի ըլլան: Հին համակարգը տեղի պիտի տայ նորին եւ կատարեալին: Վերամիացում մը, որուն օրհնութիւնը յաւիտենական է: Առաքեալը կը գրէ.— «Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ: Ինք պիտի բնակի հոն, եւ անոնք պիտի ըլլան Իր ժողովուրդը... Գահին վրայ բազմողը ըսաւ, "Ահա նոր կ'ընեմ բոլոր բաները"» (Յայտ. 21. 3, 5): Օր մը մենք ալ պիտի ուրախանանք շատ հաճելի վերամիացումով մը՝ երկինքի մէջ, մեր Երկնաւոր Հօր հետ: Չենք կրնար երեւակայել Ինչ ուրախալի օր մը պիտի ըլլայ այդ:

---

Բաժանումը երկրիմ օրէնքն է, իսկ վերամիացումը՝  
երկինքի օրէնքն է:

**Ա**ղջնակ մը իր տունէն կ'արեւ-  
լանդուր թափառաչըջիկ գոյգի  
մը կողմէ եւ անոնց խիստ հսկողու-  
թեան տակ կը մնայ: Ինը ամիսներ  
ետք կը գտնուի եւ կը վերա-  
դարձուի տուն: Անոր վերամիացու-  
մեծ ուրախութիւն կը պատճառէ  
ընտանիքի անդամներուն, որուն  
այնքան կարօտով կը սպասէին:

Յայտնութեան գիրքին մէջ Յով-  
հաննէս Առաքեալ կը ներկայացնէ  
տեսիլք մը՝ նոր երկինքի եւ նոր  
երկրի մը, ուր տեղի պիտի ունենայ  
սպառազյի մեր վերամիացումը Տէրով  
հետ (21. 1-5): Շէշտուածը այնտեղ  
աշխարհագրական վայր մը չէ, այլ  
կեանքի բնակավայրի մը մասին է,

## Մեր Կտակը

Կարդա՛  
Սաղմոս 127

Անա որդիները Տէրոջ  
ժառանգութիւնն են:  
—Սաղմոս 127. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Եպօթեր 3-5

■ Գործք 5. 22-42

պահել այս աշխարհի վրայ եւ անտեսել այն ամենէն կարեւոր շահարկութիւնը որ ամէն բանէ վեր կը մնայ՝ մեր զաւակները: Սողոմոն իմաստուն կ'ըսէ.- «Ահա որդիները Տէրոջ ժառանգութիւնն են» - անզնահատելի ժառանգութիւն մը, որ Տէրը մեզի կտակած է: «Ինչպէս են նետերը զօրաւոր մարդուն ձեռքին մէջ, այնպէս են երիտասարդութեան որդիները» (Հ. 4): Ոչինչ կայ, որ աւելի արժանի է մեր կորովին եւ ժամանակին, քան մեր զաւակները:

Պէտք չկայ «տքներով Հաց ուտելու»՝ աշխատելով գիշեր եւ ցորեկ, կը յայտարարէ Սողոմոն իմաստուն, որովհետեւ Տէրը մեզի կը Հոգայ (Սաղմ. 127. 2): Մենք կրնանք բաւարար ժամանակ տրամադրել մեր զաւակներուն, վստահելով իրեն, թէ ինք նաեւ պիտի Հայթայթէ մեր Փիզիքական կարիքները միեւնոյն ատեն: Զաւակներ՝ ըլլան անոնք մեր Հարազատները կամ մեր դաստիարակութեան յանձնուած, մեր մշտատեւ կտակն են - շահարկութիւն մը, որ երբեք պիտի չզղջանք իրագործած ըլլալնուս Համար:

Ժամանակ անցրնել մեր զաւակներուն հետ կը նշանակէ այդ ժամանակը իմաստութեամբ գործածել:

**Բ**արեկամ մը, իր գրած նամակին մէջ կ'ըսէր.- «Եթէ վաղը մեռնելու ըլլանք, այն ընկերութիւնը որուն մէջ կ'աշխատինք, շատ դիւրութեամբ կրնայ մեզ փոխարինել մի քանի օրուայ մէջ: Սակայն, այն ընտանիքը, որ ետեւ կը ձգենք, մեր կորուստը պիտի զգան ամբողջ իրենց կեանքի տեւողութեան»:

Այս բոլորէն ետք Հարց է, թէ մենք ինչո՞ւ այնքան շատ ժամանակ կը տրամադրենք մեր գործին՝ եւ այնքան քիչ մեր զաւակներուն հետ ըլլալու» - առտու կանուխ արթննալ, երեկոները ուշ տուն վերադառնալ, «տքներով Հաց ուտել» (Սաղմ. 127. 1-2) եւ մենք մեզ ծանրօրէն զբաղ

## Քաջ Հրաւեր

Կարդա՛  
Եփեսացիս 2. 14-22

Ուրեմն համարձակութեամբ մօտենանք շնորհքի գահին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհք գտնենք պատեմ ատեն օգնելու մեզի:  
—Եբրայեցիս 4. 16

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եսթեր 6-8
- Գործք 6

**Տ**րանսայի Լուի 14-րդ թագաւորը 1682-ին Վէրսայ քաղաքը նշանակեց որպէս երկրին մայրաքաղաքը եւ այդպէս ալ մնաց (բացի կարճ ժամանակ մը) մինչեւ 1789, երբ Փարիզը դարձեալ նշանակուեցաւ մայրաքաղաք: Վէրսայի գեղեցիկ թագաւորական պալատը ունէր հարուստ սրահ մը, 241 ոտք երկարութեամբ՝ հայելիներով շրջապատուած: Երբ այցելու մը մօտենալ ուզեր թագաւորին, պէտք էր ծունկ ծրէր իւրաքանչիւր հինգ քայլ անգամ մը, երբ քայելու ըլլար այդ սրահէն ներս, մինչեւ հասնէր թագաւորին արծաթէ գահին:

Օտար պատուիրակութիւններ ստիպուած էին ենթարկուելու այդ նուաստացնող ծեսերուն, յարգած ըլլալու համար Ֆրանսայի թագաւորութիւնը եւ միեւնոյն ատեն չահած կ'ըլլային Ֆրանսայի համակրանքը իրենց երկրին հանդէպ: Սակայն, ասոր ճիշդ հակառակը, մեր Աստուածը՝ Թագաւորներուն Թագաւորը, կը հրաւիրէ իր ժողովուրդը մօտենալու իր գահին որեւէ ատեն եւ ազատ կերպով - ժամադրութեան եւ խոնարհութեան պէտք չկայ:

Որքան՝ երախտապարտ պէտք է ըլլանք մեր Երկնաւոր Հօր՝ Անոր հրաւերին համար: «(Քրիստոսի միջոցաւ) արտօնութիւն ունինք մօտենալու Հօր՝ մէկ հոգիով» (Եփես. 2. 18): Ասոր համար Եբրայեցիներու նամակին հեղինակը կը խնդրէ, որ «համարձակութեամբ մօտենանք շնորհքի գահին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհք գտնենք պատեմ ատեն օգնելու մեզի» (Եբր. 4. 16):

Ակնածանքով եւ երախտազիտութեամբ մօտենանք Անոր, որովհետեւ Տիեզերքի Աստուածը միշտ պատրաստ է լսելու մեր խնդրանքը:

Աստուծոյ Գահին հասնելու մուտքը միշտ քայլ է:

## Զօրաւոր Պատգամ Մը

Կարդա՛  
Ա. Կորնթ. 1. 18-25

Արդարեւ ես ամօթ չեմ սեպեր Քրիստոսի ակետարանը, քանի որ ան Աստուծոյ զօրութիւնն է ամէն փառաստացեալի փրկութեան համար: —Հոովմայեցիս 1. 16

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ԿԷՉ

- Եպթեր 9-10
- Գործք 7. 1-21

ապագային հոգեւոր հովիւ մը եղաւ:

Աստուծոյ *Խօսքը* մեծ զօրութիւն ունի: Առաջին արձանագրուած Աստուծոյ խօսած խօսքով լոյսը ստեղծուեցաւ (Ծննդ. 1. 3): Ան խոստում մը «խօսեցաւ» Աբրահամի (17. 15-19) եւ անոր 90 տարեկան կիներ՝ Սառան զակի մը ծնունդ տուաւ (21. 1-2): Աստուած տակաւին՝ մինչեւ այսօր, կը խօսի զօրութեամբ, եւ բոլոր անոնք որոնք կը լսեն եւ կը հաւատան Աւետարանին՝ կը փրկուին (Հռովմ. 1. 16):

Այո՛, Քրիստոսի պատգամն ու Անոր փրկարար գործը խաչին վրայ, կրնան փոխել անձի մը կեանքին ուղղութիւնը: Այդ խօսքը զօրութիւն ունի հասնելու այն մարդոց սիրտերուն, որոնք դուն կը սիրես եւ անոնց համար աղօթած ես շատ անգամներ: Ուրեմն, երբեք մի՛ հրաժարիր վկայելու պարտականութենէդ: Եղի՛ր հաստատ ամէնօրեայ ընթացքիդ մէջ: Շարունակէ՛ աղօթել եւ բաժնեկցիլ Աւետարանին Բարի Լուրը ուրիշներուն հետ: Անիկա զօրաւոր պատգամ մըն է:

---

Մեր խօսքերը զօրութիւն ունին ազդելու, Աստուծոյ  
խօսքերը զօրութիւն ունին փրկելու:

**Լ** էհման Ըսթրուազ՝ Աստուածաշունչի ուսուցիչը, Յիսուսը ընդունած էր Աստուծոյ *Խօսքին* զօրութեամբ երբ ան երիտասարդ էր: Իր բարեկամուհիին թելադրանքով ան կարդաց Հռովմ. 3. 23, 5. 8 եւ 10. 13 համարները եւ համոզուեցաւ իր մեղաւոր ըլլալուն: Ապա լացաւ եւ ընդունելով իր մեղաւոր ըլլալը դարձի գալով ընդունեց Քրիստոսը: Երբ իր որդին Րիչըրտ 7 տարեկան էր, օր մը հարցուց իր հօր, թէ ինչպէս կրնար փրկուիլ: Հայրը նոյն համարները գործածեց, ինչ որ իր բարեկամուհին (այժմ իր կինը) թելադրած էր իրեն տարիներ առաջ: Իր զաւակն ալ հաւատաց եւ

## Յետաձգումի Հարցեր

Կարդա՛  
Հոովմայեցիս 12. 4-13

...Մէկ մարմինի մէջ  
ունիք շատ անդամներ,  
եւ այդ բոլոր  
անդամները միեւնոյց  
պաշտօնը չունին:  
—Հոովմայեցիս 12. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸՆԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յոբ 1-2

■ Գործք 7. 22-43

**Մ**եզմէ շատեր կը պայքարին  
Հարցեր յետաձգելու դէմ: Գա-  
նատայի Քէլկըրի Համալսարանէն  
փրոֆէսոր մը 5 տարիներ սերտելէ  
ետք այս ձգձգումի Հարցը, կ'ըսէ,  
[Թէ մարդոց 95 տոկոսը ընդհան-  
րապէս գործ մը մէկդի կը դնեն  
զայն ուրիշ օր մը ընելու Համար:  
Սերտողութիւն մը ցոյց կու տայ,  
[Թէ Ամերիկացիներ մօտաւորապէս  
400 միլիոն տոլար կը կորսնցնեն  
տարեկան, իրենց տուրքի Հաշիւները  
լեցնելը յետաձգելով: Ձախողելու  
վախով կամ այլ անապահով զգալու  
պատճառներով, կը սպասենք եւ կը  
սպասենք, մինչեւ գործ մը ընենք  
կամ որոշում մը առնենք:

**Ձգձգումը** Հարց մըն է նաեւ եկեղեցիէն ներս: Շատեր կը  
յետաձգեն Աստուծոյ ծառայելը: Լաւ գիտենք, [Թէ պէտք  
է ուրիշներու օգնութեան ձեռք երկարենք, սակայն մենք  
մեզ երբեմն տկար կը զգանք եւ կը մտահոգուինք, [Թէ  
ի՞նչ պիտի ընենք: Որովհետեւ վստահ չենք մեր շնորհք-  
ներուն կամ հետաքրքրութեանց վրայ, մէկդի կը դնենք  
եկեղեցիի գործերուն մասնակցիլը: Կը մտահոգուինք  
ըսելով, [Թէ գէշ պիտի ըլլայ եթէ տկար գործ մը ընենք,  
կամ գիտնանք, [Թէ նոյնիսկ բնաւ չենք կրնար ընել:

Հոովմ. 12-րդ գլուխը որոշ չափով կը քաջալերէ մեզ:  
Ծառայելը կը սկսի երբ մենք մեզ կը ներկայացնենք  
Աստուծոյ «որպէս ապրող զոհ» (Հ. 1): Պէտք է աղօթել եւ  
մեր անձը կրկին անգամ յանձնել Տէրոջ եւ իր գործին:  
Ապա նայիլ մեր շուրջը՝ տեսնելու Համար, [Թէ ի՞նչ կ'ընեն  
ուրիշներ եկեղեցիէն ներս եւ միանալ անոնց:

Խնդրենք Աստուծոյ, որ օգնէ մեզի, որպէսզի յաղթա-  
հարենք մեր յետաձգելու տկարութեան:

Առողջ եկեղեցի մը ունենալու համար մարգէ՛ հոգեւոր  
շնորհքներդ:

## Շէմբանգէի Եդեմ

Կարդա՛  
ԹՈՒՆԳ 14. 1-10

Եթէ Տէրը մեզի հաճի,  
մեզ այդ երկիրը պիտի  
տանի եւ զայն մեզի  
պիտի տայ:  
—ԹՈՒՆԳ 14. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յոր 3-4

■ Գործք 7. 44-60

վանդակներու մէջ, տանելու համար իրենց նոր տունը, անոնք կռիւ մը կը սկսին: «Անոնք չեն գիտեր, թէ ես գիրենք պիտի տանիմ Շէմբանգէի Եդեմը եւ ուր պիտի ունենան շատ աւելի լաւ կեանք մը»:

Աւելի բաճր չափանիշով, Աստուած ալ երբեմն կ'ուզէ ազատագրել մեզ մեղքի գերութենէն եւ մեր ընդիմութիւններուն կը հանդիպի: Երբ Աստուած ազատեց Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսի գերութենէն, Աստուած անցուց զանոնք դժուարին պայմաններու եւ վայրերու մէջէն, եւ անոնք սկսան նոյնիսկ կասկածիլ Աստուծոյ բարի մտադրութեան վրայ եւ ըսին.— «Լաւ չըլլա՞ր, որ Եգիպտոս վերադառնան» (ԹՈՒՆԳ 14. 3):

Հաւատքի մեր ճամբորդութեան մէջ, կան ժամանակներ, երբ մեր ետեւ մեղքի «ազատութիւնը» աւելի հրապուրիչ թուի ըլլալ քան հաւատքի խտուրտութիւնները որ կը գտնենք մեր առջեւ: Վստահինք Աստուծոյ խոտուրտներուն, որ միակ միջոցն է հասնելու վերջնական ազատութեան:

**Յ**աճախ շէմբանգէի ճագեր բռնի կ'առնուին իրենց ծնողքներէն եւ բանտարկուած կը մնան խուցերու պէս փոքր եւ նեղ տեղեր, եւ տարիներ, երբեմն իրենց ամբողջ կեանքի ընթացքին հոն կը մնան: Կենդանաբան մը երբ կու գայ զանոնք ազատելու եւ աւելի ընդարձակ եւ ազատ վայր մը տանելու, որ ինք կը կոչէ Շէմբանգէի Եդեմ, կապիկները իրեն թշնամական դիրք եւ անվստահութիւն կը ցուցաբերեն:

«Այդ Շէմբանգէները չեն անդրադառնար, թէ ես որպէս բարի մարդ, իրենց օգուտին եւ հանգիստին համար կ'ուզեմ ընել այդ ամէնը», կ'ըսէ ան: Երբ կը փորձէ դնել զանոնք

## Սուրբերուն Երգը

Կարդա՛  
Յայտնութիւն 15

Տէ՛ր, ո՞վ պիտի վախ-  
նայ քեզմէ եւ չփառա-  
ւորէ քու անունդ, որով-  
հետեւ դուն միայն սուրբ  
ես... քու արդար դատա-  
վճիռներդ յայտնա-  
բերուեցան:  
—Յայտ. 15. 4

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ԼԵՎ  
ՏԱՐՈՒՆ ԼԵՎ

- Յոբ 5-7
- Գործք 8. 1-25

չհաստատէ, ինչպէս նկարագրուած է Յայտնութեան գիրքին մէջ, այդ մէկը պիտի ըլլայ անտեսում իր սրբազան նկարագրին: Ատոր համար է, որ իր դատապարտութեանց ընթացքին, սուրբերը պիտի երգեն եւ փառաբանեն Զինք ըսելով.— «Տէ՛ր, ո՞վ պիտի չվախնայ քեզմէ եւ չփառաւորէ քու անունդ, որովհետեւ դուն միայն սուրբ ես... քու արդար դատավճիռներդ յայտնաբերուեցան» (15. 4): ԶԱստուած, ճանչցողները պիտի չդատեն Զինք իր մեղաւորներուն դատապարտութեան համար, այլ պիտի փառաբանեն Զինք եւ հաստատեն իր ըրածը:

Դատաստանի օրը մեզ զարմացնողը այն ահաւոր դատապարտութիւնը պիտի չըլլայ, այլ իր երկար ատեն համբերելը եւ խոր փափաքը, որ ամէն մարդ դարձի գալով ապաշխարէ, որպէսզի չկորսուի (Բ. Պետ. 3. 9): Աստուած կը յետաձգէ իր դատապարտութիւնը, եւ յաճախ առաւելագոյն առիթը կու տայ որ դարձի գանք: Հիմա է ժամանակը ապաշխարելու եւ օգտուելու իր համբերատար սէրին:

---

Երբ Աստուծոյ արդարութիւնը վերջնականապէս եւ լրիւ յայտնուի, Զինք փառաբանելը պիտի արձագանգէ:

## Խրատ Փեսային

Կարդա՛  
Առակաց 1. 1-9

Որդեա՛կս, մտի՛կ ըրե՛  
քու հօրդ խրատը:  
—Առակաց 1. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յոթ 8-10

■ Գործք 8. 26-40

Երբ հասայ հաւաքոյթի վայրը, ուր անպաշտօն նախաճաշ մը տեղի կ'ունենար, ուրախ տրամադրութիւն մը գտայ: Հայրեր, հօրեղբայրներ, եղբայրներ եւ բարեկամներ, կենսուրախ խօսակցութեան մէջ էին: Խնդրուեցաւ հարսնցուին հօրմէն եւ փեսացուին հօրմէն, որ իրենց փորձառութենէն խրատներ տային, թէ իրենք ինչ սորված էին իրենց քրիստոնէական ամուսնութենէն: Անոնց մտածումները անձնական էին, իրապաշտ, անկեղծ եւ սուրբ գրային:

Առակաց գիրքը կ'արտացոլացնէ այդ տեսակի ուսուցում մը, դիմազրաւելու համար կեանքի հարցերն ու մարտահրաւէրները: Հոն կը կարդանք.— «Որդեա՛կս, մտիկ ըրէ՛ քու հօրդ խրատը... Արդարեւ անոնք քու գլուխիդ շնորհքի ծաղկեպսակ պիտի ըլլան» (Առակ. 1. 8-9):

Որքա՛ն Աստուածահաճոյ պիտի ըլլայ եթէ այդպէս շատ մը զոյգեր, իրենց ամուսնութենէն առաջ, ընդունէին հաւատացեալ ծնողներու խրատներն ու հոգեւոր իմաստութիւնը, իրենց նորակազմ ընտանիքին համար:

---

Իսկապէս իմաստուն է ան, որ իր իմաստութիւնը կը  
շափի ուրիշներու փորձառութեան:

## Պատրաստ ես

Կարդա՛  
Գործք 13. 1-5

Մինչ անոնք Տերոջը պաշտօնը կը կատարէին ու ծոմ կը պահէին, Սուրբ Հոգին ըսաւ.- «Զատեցէ՛ք ինձի Բառնաբար եւ Սողոսը՝ այն գործին համար...»: – Գործք 13. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յոբ 11-13  
■ Գործք 9. 1-21

մէջ: Անմիջապէս հեռաձայնեցի բարեկամիս, որուն հետ մեր վերջին խօսակցութենէն ետք կապ չէի պահած: Երբ հարցուցի, թէ տակաւին կուզէր երթալ: Անմիջապէս պատասխանեց.- «Անշուշտ այո՛: Անձագիրս ալ նորոգեցի արդէն, որպէսզի պատրաստ ըլլամ, հակառակ պարագային եթէ կանչելու ըլլայիր զիս»: Բարեկամիս պատրաստութիւնը ինձի յիշեցուց այն՝ ինչ որ պատահեցաւ առաջին դարուն՝ Անտիոքի մէջ: Պօղոս եւ Բառնաբար, շատ մը ուրիշ մարդոց հետ, իրենք զիրենք պատրաստած էին հոգեւորապէս՝ ընելու կամ երթալու, եթէ Աստուած իրենցմէ խնդրէր: Անոնք Անձագիրի պէտք չունէին, այլ աղօթելու, «Տերոջը պաշտօն կատարելու եւ ծոմ պահելու» (Գործք 13. 2): Եւ երբ Սուրբ Հոգին ըսաւ.- «Զատեցէ՛ք ինձի Բառնաբար եւ Պօղոսը՝ այն գործին համար (Կ. 2), անոնք բոլորն ալ պատրաստ էին ճամբորդութեան:

Երբ Սուրբ Հոգին քեզի ըսէ «գնա՛», պատրաստ ես երթալու:

Գործիքներդ պատրաստ պահէ, Աստուած գործ ունի  
քեզի յանձնելիք:

**Ե**րեք ամիսներ առաջ ծրագրուած  
միախորհարական շրջապտոյտի մը  
եւ անոր ընթացքին կատարուելիք  
ձեռնարկի մը մասին կը խօսէի  
բարեկամի մը հետ: Բարեկամս ըսաւ.-  
«Եթէ խումբէն մէկը չուզէ երթալ,  
ես պատրաստ եմ անոր տեղ երթա-  
լու»: Կատարուելիքը ութը օրերու  
դիւրին գործ մը պիտի չըլլար, քանի  
որ կային ճըմէյքայի ամառուայ  
կիզիչ արեւին տակ, ներկի, նորո-  
գութեան եւ կառուցումի նման  
գործեր: Այդ բոլորէն ետք, բարե-  
կամս կ'երեւի յօժար էր հետս գալու:

Մեր մեկնումի ճշդուած ժամա-  
նակէն վեց շաբաթներ առաջ, մէկ  
հոգիի տեղ բացուեցաւ խումբին

## Կը Լսե՞ս Կոչը

Կարդա՛  
Եսայի 6. 1-8

...Լսեցի Տէրոջը ձայնը  
որ կ'ըսէր.- «Ո՞վ ղրկեմ,  
ու մեզի համար ո՞վ  
պիտի թեթայ»: Ես ալ  
պատասխանեցի.-  
«Ահա՛ հոս եմ, զիս  
ղրկե՛»:»  
- Եսայի 6. 8

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԻ ԿՆՆԵՆ  
ՏԱՐԻՆՆԵՐ ԿՈՇԻՑԸ  
■ Յոբ 14-16  
■ Գործք 9. 22-43

Հրատարակուած էր.- «Մայք գնաց, ո՞վ պիտի ծառայէ իր տեղ»: Աւելի քան 200 աշակերտներ ոտքի ելան ստանձնելու համար վերարկուն՝ Յիսուսի ինկած ծառային:

Այդ աշակերտներուն պատրաստակամութիւնը կ'արձագանգէր Եսայի մարգարէին նուիրումի կոչին: Վախի եւ անապահովութեան ժամանակի մը մէջ, մարգարէն կանչուած էր Աստուծոյ գահին սենեակը, ուր լսեց Անոր ձայնը որ կ'ըսէր.- Ո՞վ ղրկեմ, մեզի համար ո՞վ պիտի երթայ»: Մարգարէն կը պատասխանէ.- «Ահա՛ հոս եմ, զիս ղրկէ՛» (Եսայի 6. 8):

Աստուած տակաւին, այսօր եւս կը կը կանչէ մարդոց եւ կիներու, որպէսզի դեպաններ ըլլան Իրեն համար: Ան կոչ կ'ընէ մեզի Իրեն ծառայելու - երբեմն մեր տան մօտ եւ երբեմն ալ հեռու երկիրներ: Կարեւոր հարցումը մեզի համար այս է.- Ինչպէ՞ս պիտի պատասխանենք Իր կոչին: Թող Աստուած ինք տայ մեզի քաջութիւնը ըսելու.- «Ահա՛ հոս եմ, զիս ղրկէ՛»:

---

Երբ Աստուած կը կանչէ մեզի, կ'որակաւորէ մեզ: Եւ  
ամոր որ կ'որակաւորէ, կը ղրկէ գայն:

**Ա**ստուածաբանական ճեմարանի  
մէջ սիրելի բարեկամ մը ունէի,  
որ խորապէս կը սիրէր Յիսուսը:  
Անոր սրտի փափաքն ու երազն էր  
չըջանաւարտ ըլլալէ ետք ամուս-  
նանալ իր նշանածին հետ եւ վերա-  
դառնալ Ամբերիկայի մայրաքաղաք՝  
Վաշինկթըն, եւ այնտեղ եկեղեցի  
մը հիմնել, որպէսզի իր բարեկամ-  
ներուն եւ ընտանիքին Քրիստոսը  
ճանչցնէ որպէս Փրկիչ:

Դժբախտաբար այդ երազը վերջ  
գտաւ երբ ինք եւ իր նշանածը ահա-  
ւոր արկածի մը զոհը դարձան,  
ցնցելով ամբողջ աշակերտութիւնը:  
Անոնց համար կատարուող յիշատակի  
պաշտամունքի ընթացքին, կոչ մը

## Փնտտել եւ Փրկել

Կարդա՛  
Ղուկաս 19. 1-10

Արդարեւ մարդու որդից  
եկա՛ որպէսզի  
կորսուածը փնտտել եւ  
փրկէ:  
—Ղուկաս 19. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Յոբ 17-19
- Գործք 10. 1-23

**Գ**րեթէ ամէն շաբաթ կը լսենք լուրերէն փնտուելու եւ փրկելու առաքելութեան մասին: Այդ կրնայ ըլլալ մանուկ մը, որ ընտանեկան պտոյտի մը ընթացքին, ակամայ հեռանալով կեդրոնէն, կը կորսուի: Կամ լեռ մագլցող մը, որ կը կորսնցնէ իր ճամբան, կամ մարդիկ, որոնք երկրաշարժի պատճառով փլատակներու տակ կը մնան: Նման պարագաներու տակ, անոնք չեն կրնար իրենք իրենց օգնել եւ փրկել: Եւ անոնք որոնք կը գտնուին եւ կը փրկուին, ընդհանրապէս ընդմիջտ երախտապարտ կը մնան զիրենք գտնող եւ փրկող մարդոց:

**Զաքիոսի պատմութիւնը, Ղուկաս 19. 1-10** համարներուն մէջ, պատմութիւն մըն է փնտուելու եւ փրկելու մասին: Առաջին ակնարկին, ան կը թուի բախտի ձգուած դէպքերու շարանի մը: Յիսուս պատահմամբ կ'անցնէր Երիքովի մէջէն եւ տուրք հաւաքող հարուստ մարդ մը, ծառի մը վրայ մագլցած, կ'ուզէր տեսնել հրաշքներ գործող ուսուցիչը, որուն մասին լսած էր: Սակայն, այս անգամ Յիսուսի հետ դէմ առ դէմ գտնուելը պարզ պատահականութիւն մը չէր: Պատմութեան աւարտին, Ղուկաս խոհեմաբար դրած է Յիսուսի խօսքերը ուղղուած **Զաքիոսի**.— «Այսօր փրկութիւն եղաւ այս տան... Արդարեւ Մարդու Որդին եկաւ՝ որպէսզի փնտուէ կորսուածը եւ փրկէ» (Կ. 9-10):

Յիսուս իր «փնտուէ եւ փրկէ» գործը սկսաւ այս երկրի վրայ իր կեանքով, մահուամբ եւ յարութեամբ: Ան կը շարունակէ փրկութեան այդ գործը այսօր՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ կը հրաւիրէ մեզ իր հետ փնտուելու եւ փրկելու բոլոր այն սիրելիները, որոնք կորսուած են:

**Անոնք որոնք մեղքէ ազատուած են, շատ լաւ կրնան փրկել անոնց, որոնք մեղքի մէջ են:**